

Լ. Զ. ԵՐԶԻՒԱՏԱՆ, Մ. Շ. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ, Լ. Հ. ՀԱԿՈԲԱՆ

ՏԱՐԲԵՐ ԱՄԻՆՈԹԹՈՒՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԹՆԱԹՎԱՅԻՆ  
ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Կաթի բիմիական բաղադրությունը մեծ նշանակություն ունի կաթնաթթվային բակտերիաների զարգացման և նրանց ակտիվ կենսագործունեության համար:

Գարնան կաթի, «անմակարդելիությունը» տարբեր դիտնական-ներ տարբեր կերպ են բացատրում:

Տիխոմիռովան (1958) ամռան կաթի մեջ հայտնաբերել է 10, իսկ գարնան, ձմռան և աշնան կաթերում՝ 5—7 տեսակ ամինոթթուներ: Նա միաժամանակ ցուց է տվել, որ գարնան և աշնան կաթերն իրենց մեջ չեն պարունակում տիրողին, մեթիոնին, վալին, սերին, լեյցին, ալանին և արգինին:

Գորբաշևան (1950) պարզել է, որ արոտային ժամանակաշրջանում կաթի մեջ դիկարբոնային ամինոթթուները պակասում են:

Դունկան (Duncan) և ուրիշները (1952), որոշելով տարբեր կովերի կաթնատվության տարբեր ժամանակաշրջանում կաթի ամինոթթվային կազմությունը հայտնաբերել են 10 անփոխարինելի ամինոթթուներ: Միաժամանակ նրանք ցուց են տալիս, որ կաթնատվության 60-րդ օրում կաթի մեջ ավելանում են մեթիոնինը, տրենինը, վալինը, պակասում են հիստիդինի, լեյցինի, լիզինի և տրիպտոֆանի քանակությունները:

Կուգեներ և Մեղվեդեան (1961) խրոմոտոգրաֆիկ եղանակով որոշելով կաթի մեջ տարբեր ամինոթթուների քանակը տարվա ըուլոր ամիսներում պարզել են, որ կաթի ամինոթթվային բաղադրությունն ըստ ամիսների փոփոխության է ենթարկվում:

Տիխոմիռովան (1958) և Գորբաշևան (1950) գտնում են, որ տարվա տարբեր եղանակներին կաթի ամինոթթուների քանական և որակական փոփոխությունները պայմանավորված են կովի տարիքով, ցեղով, կերի տեսակով, կաթնատվության ժամանակաշրջանով և այլ պայմաններով:

Դավիդովը և Կրուգլովան (1958) հաստատում են, որ գարնանային կաթի «անմակարդելիության» պատճառներից մեկը վիտամին B<sub>12</sub>-ի պակասությունն է:

Նովիկովան (1957) ցույց է տալիս, որ կաթի լակտազան կաթնատվության սեղոնային փոփոխության նկատմամբ շատ զգայում է:

Վալդմանը (Weigmann) և Բալերինկը (Beijerink) (1889) կաթնաթթվալին բակտերիաների լավ զարգացման համար որպես ազոտի աղբյուր առաջարկում են օգտագործել պեպտոնը, իսկ Վոլոսկիչը (1916), կաթին ավելացնելով 10% պեպտոն, կարողացել է Str. lactis-ի թթու արտադրելու ունակությունը երկու անգամ բարձրացնել:

Բարխարն (Barchar) ու Կորդեթը (Cordet) (1926), Կնուդսեն (Knudsen) ու Սորենսեն (Soerensen) (1927), Սագաստում (Sagastum), Կասկոնը (Cascon) (1931), Դավիսը (Davis) և Մաթիկը (Mattik) (1933) պարզել են, որ հատկապես գարնան կաթի մեջ որպեսզի կաթնաթթվալին բակտերիաները լավ զարգանան, անհրաժեշտ է նրա մեջ ավելացնել ազոտ պարունակող նյութեր՝ պեպտոն, շաքարանկալին ավտոլիզատ, ամինոթթուներ և ալյնի:

Կաթի մեջ կաթնաթթվալին ուժեղ խմբում առաջացնելու և սպիտակուցներով հարստացնելու համար Աֆանասեև և Կոստիչեկը (1932) առաջարկել են կաթին ավելացնել ոլոռի, լոբու, լուռպինի սերմերի մզկածքը:

Սկալոնը (1940) նույնականացնելով շաքարասընկալին ավտոլիզատ, պեպտոն, կարողացել է բարձրացնել Str. lactis-ի և Bact. bulgaricum-ի թթու արտադրելու ունակությունը:

Երզինկյանի (1958) փորձերը ցույց են տվել, որ գարնանային կաթի մեջ կաթնաթթվալին բակտերիաներ զարգանալու դեպքում շորս և ավելի անգամ պակասում է ոչ միայն նրանց կաթնաթթու արտադրելու ունակությունը, այլև իշնում է մակարդի օրգանոլեպտիկ հատկությունները:

Մեր նպատակն է պարզել, թե գարնանային կաթի ռանմակարդելիությանը և կաթնաթթվալին բակտերիաների զարգացման վրա ի՞նչպիսի ազդեցություն են թողնում տարրեր ամինոթթուները:

Այդ հարցերը լուսաբանելու համար ուսումնասիրել ենք տեղական ալյատեսակի հետևյալ կաթնաթթվալին բակտերիաները՝ գնդաձերից № № 1302, 1311, 1179C, ձողաձերից՝ № № 27M 209, 317/385, 225 բակտերիաները և շաքարանկերի ու կաթնա-

թթվալին՝ 1210 ալլատեսակի խառնուրդ։ Ամինոթթուններից՝ DL-ալֆա-ալանինի, ամինոթթացախաթթվի, L-աղաթթվական արգինինի, L-ասպարագինի, DL-ասպարագինաթթվի, DL-բետա-ալանինի, DL-վալինի, L-աղաթթվական հիստիդինի, DL-լիցինի, DL-աղաթթվական լիզինի, DL-մեթիոնինի, L-գլուտամինաթթվի, DL-աղաթթվական օրնիթինի, DL-սերինի, DL-տրիպտոֆանի, L-ցիստեինի, նինջիոքինի աղդեցությունը կաթնաթթվային բակտերիաների զարգացման վրա։

Տարբեր ամինոթթունների, գարնան կաթի մեջ կաթնաթթվային բակտերիաների զարգացման և կաթի «անձակարդելիության» վրա թողած աղդեցությունը որոշելու համար մարտ և ապրիլ ամիսների կաթերին ավելացրել ենք 0,001% և 0,005% տարբեր ամինոթթուններ։

Ուսումնասիրությունները ցուց տվեցին (աղյուսակ 1), որ երբ կաթին ավելացնում ենք այս կամ այն ամինոթթուն կաթնաթթվային բակտերիաների աճեցողությունն ուժեղանում է, իսկ կաթի մակարդումը տեղի է ունենում նորմալ։ Օրինակ՝ կաթի մեջ 0,001% DL-վալին ավելացնելու դեպքում կաթնաթթվային ձողածել № 27 Մ բակտերիայի թթու արտադրելու ունակությունը, ստուգիչի համեմատությամբ, 51° Թ-ով բարձրանում է, իսկ 0,005% DL-վալին ավելացնելու դեպքում՝ 108° Թ-ով։

Նույնանման արդյունք է ստացվում կաթնաթթվային կոկածե, ինչպես նաև շաբարասնկերի ու ձողածե կաթնաթթվային բակտերիաների համատեղ զարգացման ժամանակ, երբ կաթին տարբեր ամինոթթուններ ենք ավելացնում։ Սակայն որոշ դեպքերում այդ օրինաշափությունը խախտվում է։ Այսպես՝ երբ կաթին 0,001% L-գլուտամինաթթու ենք ավելացնում կաթնաթթվային ձողածե № 27 Մ բակտերիայի թթու արտադրելու ունակությունը որոշ շափով թուլանում է, եթե կաթին 0,001% L ցիստեին ենք ավելացնում № 1302 զնդածե բակտերիայի թթու արտադրելու ունակությունը նույնպես թուլանում է։

Աղյուսակ 2-ի տվյալներից երևում է, որ բոլոր փորձարկվող կաթնաթթվային ացիդոֆիլ բակտերիաներն ապրիլ ամսվա կաթը թուլ են մակարդում, դանդաղում է բակտերիաների կիսվելու ընթացքը։

Ապրիլ ամսվա կաթի մեջ 0,005% L-ցիստեին, DL-սերին, DL-ալֆա-ալանին, DL-մեթիոնին, L-ասպարագին, L-գլուտամինաթթու, DL-վալին, L-աղաթթվական արգինին ավելացնելու հետևանքով կաթնաթթվային ացիդոֆիլ բոլոր բակտերիաները ավելի

կաթնամթիւն բակտերիաների դարդացման վրա ամենթիւնների աղեցությանը մարտ ամսութա կաթնելի անջլ:

(7 օպական կաթնամթիւնը բթիւնը բակտերի շահագութան մարտ ամսութանը մարտ ամսութանը)

100 մ/ կաթիւն աղելացրած ամինոթիւնը բակտերի քանակը միկրոգրամ:

կաթնամթիւն բակտերիաներ	Ստուդիում Բյունակ	DL-ամֆիսա- միանին			DL-ամֆիսա- միանին			L-ամֆիսա- միանին			L-ամֆիսա- միանին			
		0,001	0,005	0,001	0,005	0,001	0,005	0,001	0,005	0,001	0,005	0,001	0,005	
27 Մ		268	301	388	319	376	250	295	315	374	306	370	315	331
1311		97	91	114	99	108	99	118	97	133	120	95	97	118
209		237	248	270	243	274	288	288	272	290	310	299	266	284
317/385	*	313	333	374	321	368	323	364	321	351	303	352	334	366
225		297	288	352	286	368	288	372	288	372	301	368	297	352
1392		103	99	110	81	95	101	103	101	101	77	112	105	105
1210		139	154	164	148	154	150	162	143	154	143	152	148	158
1179 Ը		71	77	77	79	79	75	79	77	77	73	79	79	79

## Աղջուռակ 2

Տարրեր ամինոթթուների ազդեցությունը ացիդոֆիլային կաթնաթթվային բակտերիաների դարձացման վրա

Կաթնաթթվային բակտերիաների	Մակարդան տևո- ղությունը ժամերով		Մակարդի բնույթը		Բակտերիաների մեծու- թյունը (միկրոններով)	
	Առանց ամինոթթվով	Ամինոթթվով	Առանց ամինոթթվով	Ամինոթթվով	Առանց ամինոթթվով	Ամինոթթվով
9 <sup>1</sup>	25	17	թույլ	պինդ	4—14×0,9	4—10×0,9
3 M	25	17	թույլ	շատ պինդ	4—10×0,8	3—8×0,9
125	36	17	թույլ	պինդ	4—22×0,9	4—14×0,9
317/385	36	17	թույլ	պինդ	4—22×0,9	4—14×0,9
317/396	25	17	թույլ	պինդ	4—30×0,8	4—10×0,8
317/402	25	17	թույլ	շատ պինդ	2—18×0,9	2—12×0,8

արագ են մակարդում կաթը, կաթնամակարդը ստացվում է պինդ, բջիջների կիսվելու ընթացքը կանոնավորվում է: Օրինակ՝ 317/385 կաթնաթթվային ացիդոֆիլային բակտերիան կաթին առանց ամինոթթուներ ավելացնելու կաթը մակարդում է 36 ժամում, մակարդն ստացվում է շատ թույլ: Սակայն, երբ կաթին 0,905% ամինոթթուներ ենք ավելացնում, նույն բակտերիաները կաթը մակարդում են 17 ժամում: Մակարդն ստացվում է պինդ: Գարնան կաթի մեջ № 317/385 ացիդոֆիլային բակտերիաների մեծությունը տատանվում է 4—22×0,9 ս-ի, սակայն կաթին ամինոթթուներ ավելացնելիս նրանց մեծությունը փոքրանում է 4—14×0,9 ս-ի (նորմալ մեծություն): Գարնանային կաթի մեջ № 317/396 ացիդոֆիլային բակտերիաների բջիջների մեծությունը տատանվում է 4—30×0,8 ս-ի սահմաններում, իսկ կաթի մեջ ամինոթթուներ ավելացնելուց նըրանց բջիջների մեծությունը տատանվում է 4—10×0,8 միկրոնի սահմաններում:

Նույնանման պատկեր է ստացվում նաև մյուս ացիդոֆիլային կաթնաթթվային բակտերիաների մոտ:

Ուսումնասիրվել է նաև սպիտակուցազերծ կաթնաշիճուկում առանձին ամինոթթուների թողած ազդեցությունը՝ կաթնաթթվային բակտերիաների վրա:

Կաթնաթթվային բակտերիաների՝ ամինոթթուների նկատմամբ մինիմալ պահանջը որոշելու համար պատրաստել ենք (Լ. Երգինկյանի մեթոդով) սպիտակուցազերծ կաթնաշիճուկ, որտեղ լրիվ բացակայում են ամինոթթուները:

100 մլ սպիտակուցազերծ կաթնաշիճուկին ավելացրել ենք 0,005 մգ հետազոտվելիք ամինոթթու և ենթարկել ստերիլիզացիայի:

Ստուգիչ և փորձարկվող փորձանոթի մեջ ցանել ենք կաթնաթթվային բակտերիաները: Փորձանոթթու ըստ  $40^{\circ}$  ջերմության տակ 7 օր պահելուց հետո որոշել ենք հետազոտվող նյութի թթվությունն ըստ Թյորների: Ստացված արդյունքները բերվում են 3, 4 և 5 աղյուսակներում:

Աղյուսակ 3-ի տվյալներից երկում է, որ կաթին 0,005% տարբեր ամինոթթուներ ավելացնելիս փորձարկված բոլոր կաթնաթթվային բակտերիաներն սպիտակուցազերծ կաթնաշիճուկում բարձրացնում են իրենց թթու արտադրելու ունակությունը: Այսպես, եթե ստուգիչ սպիտակուցազերծ կաթնաշիճուկում № 3 Մ

### Աղյուսակ 3

Սպիտակուցազերծ կաթնաշիճուկում տարբեր ամինոթթուների ազդեցությունը կաթնաթթվային բակտերիաների զարգացման վրա

$\text{կմ}^3/\text{մաթթագլուխություն}$	$\text{Ստուգիչ } \text{կմ}^3/\text{մաթթագլուխություն}$	$\text{Սպիտակուցազերծ } \text{կմ}^3/\text{մաթթագլուխություն}$				
--	--	---	---	---	---	---

### Թթվառթյունն ըստ Թյորների

125	214	59	63	58	60	59	59	60
317/385	212	40	41	49	58	42	46	48
3 Մ	228	61	70	63	65	66	62	66
225	230	66	74	64	63	66	67	60
1302	76	19	20	20	20	20	20	21
1311	80	16	19	20	20	20	17	22

Կաթնաթթվային բակտերիան առաջացնում է  $61^{\circ}$  թթվություն ըստ Թյորների, իսկ 0,005% ալֆա-ալանին ավելացնելու դեպքում նույն բակտերիան առաջացնում է  $70^{\circ}$  թթվություն:

№ 1311 գնդաձև կաթնաթթվային բակտերիաների թթու արտադրելու ունակությունն ակտիվանում է, եթե սպիտակուցաղերծ կաթնաշիճուկին ավելացնում ենք 0,005 % բետա-ալանին:

Ինչպես երևում է 4 և 5 աղյուսակներում բերված տվյալներից, 0,005% տարրեր ամինոթթուների ազդեցության տակ փորձարկված բոլոր կաթնաթթվային բակտերիաները բարձրացնում են իրենց թթու արտադրելու ունակությունը:

Այսպես, օրինակ՝ եթե № 125 կաթնաթթվային բակտերիաներն ստուգիչ կաթի մեջ զարգանալիս առաջացնում են  $59^{\circ}$  թթվություն ըստ Թյորների, ապա կաթին 0,005% DL-մեթիոնին ավելացնելիս նրանք առաջացնում են  $70^{\circ}$  թթվություն:

#### Աղյուսակ 4

Սպիտակուցաղերծ կաթնաթթվային ճուկում տարրեր ամինոթթուների ազդեցությունը կաթնաթթվային բակտերիաների զարգացման վրա

կաթնաթթվական բակտերին բակտերիաների մակարդակը	Սպիտակուցաղերծ կաթնաթթվային ճուկում տարրեր ամինոթթուների ազդեցությունը	Սպիտակուցաղերծ կաթնաշիճուկին 0,005% ամինոթթու ավելացնելու գեղագում							
		DL-աղյուսակ կաթնաթթվական ճուկում տարրերի մակարդակը	DL-աղյուսակ կաթնաթթվական ճուկում տարրերի մակարդակը	DL-աղյուսակ կաթնաթթվական ճուկում տարրերի մակարդակը	DL-աղյուսակ կաթնաթթվական ճուկում տարրերի մակարդակը	DL-աղյուսակ կաթնաթթվական ճուկում տարրերի մակարդակը	DL-աղյուսակ կաթնաթթվական ճուկում տարրերի մակարդակը	DL-աղյուսակ կաթնաթթվական ճուկում տարրերի մակարդակը	DL-աղյուսակ կաթնաթթվական ճուկում տարրերի մակարդակը
<b>Թթվությունն ըստ Թյորների</b>									
125 317/385	214 212	59 40	65 53	61 44	63 46	69 52	70 48	65 42	
3 M	228	62	60	54	60	67	62	50	
225	230	66	67	63	63	63	63	65	
1302	76	19	19	20	21	22	18	19	
1311	80	16	22	20	20	20	19	19	

№ 1302 գնդաձև կաթնաթթվային բակտերիաների թթու արտադրելու ունակությունն ավելանում է, եթե սպիտակուցաղերծ կաթնաշիճուկին DL-լիցիին ենք ավելացնում:

Աղյուսակ 5-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ № 3 M և № 225 կաթնաթթվային բակտերիաների թթու արտադրելու ունակությունը բարձրանում է, եթե կաթին ավելացնում ենք DL-աղյուսական օրնիթիին, իսկ № 1302 և № 1311 կաթնաթթվային բակտերիաներն իրենց թթու առաջացնելու ունակությունը բարձրացնում են, եթե կաթին ավելացնում ենք L-ցիստեին: Բոլոր տե-

Աղյուսակ 5

Սպիտակուցազերծ կաթնաշիճուկում տարրեր ամինոթթուների ազդեցությունը  
կաթնաթթվային բակտերիաների զարգացման վրա

Կաթնաթթվային թթվային բակտերիաներ	Սպիտակուցազերծ կաթնաշիճուկում տարրեր	Սպիտակուցազերծ կաթնաշիճուկին 0,005% ամինոթթու ազդեցությունը				
		DL-ազամ-թթվային օքսիթթվային	DL-ասկրեպտին	DL-ասպարգին	L-էլեմանին	Զինկին
<b>Թթվային բակտերիան ըստ թիորների</b>						
125	214	59	69	65	76	70
317/385	212	40	51	50	46	53
3 M	228	61	72	62	57	60
225	230	66	73	56	65	70
1302	76	19	20	20	23	25
1311	80	16	17	19	20	24

սակի կաթնաթթվային բակտերիաները 0,005% նինհիդրին ամինոթթվի ազդեցության տակ թույլ են զարգանում և նրանց թթու արտադրելու ունակությունը ոչ միայն ստուգիչի, այլև մյուս ամինոթթուների համեմատությամբ, թույլ է արտահայտվում:

№№ 4 և 5 աղյուսակներում բերված տվյալներից երևում է, որ L-աղաթթվական հիստիդինը և L-գլուտամինաթթուն № 3 M կաթնաթթվային բակտերիայի զարգացման վրա բարերար ազդեցություն չեն թողնում:

Ուսումնասիրվել են նաև կաթնաթթվային բակտերիաների զարգացման վրա ամինոթթուների համատեղ ազդեցությունը:

Ինչպես ցույց են տալիս 6, 7 և 8 աղյուսակներում բերված տըվյալները, փորձարկված բոլոր կաթնաթթվային բակտերիաներն ամինոթթուների համատեղ ազդեցության տակ բարձրացնում են թթու արտադրելու իրենց ունակությունը:

Աղյուսակ 6-ի տվյալներից երևում է, որ №№ 125, 317/385, 3 M, 1302 և 1311 կաթնաթթվային բակտերիաների թթու արտադրելու ունակությունը բարձրանում է, եթե սպիտակուցազերծ կաթնաշիճուկին ավելացնում ենք DL-ալֆա-ալանին, DL-ասպարագինաթթու և L-գլուտամինաթթու միասին: Օրինակ, եթե սպիտակուցազերծ կաթնաշիճուկին ամինոթթուներ չենք ավելացնում, ապա № 317/385 կաթնաթթվային բակտերիաներն առաջացնում են

$40^{\circ}$  թթվություն, իսկ ամինոթթուններ ավելացնելիս առաջացնում են  $60^{\circ}$  թթվություն:

225 կաթնաթթվային բակտերիաներն սպիտակուցաղերծ կաթնաշիճուկում առանց ամինոթթունների առաջացնում են  $66^{\circ}$  թթվություն, իսկ երբ սպիտակուցաղերծ կաթնաշիճուկին ավելացնում ենք DL-վալին, L-աղաթթվային հիստիդին և L-գլուտամինաթթուու, առաջացնում են  $90^{\circ}$  թթվություն:

## Աղյուսակ 6

Սպիտակուցաղերծ կաթնաշիճուկում տարրեր ամինոթթունների ազդեցությունը կաթնաթթվային բակտերիաների զարգացման վրա

Կաթնաթթվային բակտերիաների բարձրացնելու մատուցական թթվություն	Սուուղիւ կաթնաթթվային բակտերիաների ազդեցություն	Սպիտակուցաղերծ կաթնաշիճուկին + 0,005% ամինոթթուններ ավելացնելու զննություն						
		DL-մեթիուզին + L-աղաթթվային L-կանֆետինիլին L-աղաթթվային N-իլին	DL-մեթիուզին + L-աղաթթվային L-կանֆետինիլին L-աղաթթվային N-իլին	DL-մեթիուզին + DL-աղաթթվային L-կանֆետինիլին L-աղաթթվային N-իլին	DL-մեթիուզին + DL-աղաթթվային L-կանֆետինիլին L-աղաթթվային N-իլին	DL-մեթիուզին + DL-աղաթթվային L-կանֆետինիլին L-աղաթթվային N-իլին	DL-մեթիուզին + DL-աղաթթվային L-կանֆետինիլին L-աղաթթվային N-իլին	
125	214	59	63	60	66	66	78	60
317/385	212	40	45	46	59	50	60	48
3 M	228	61	70	73	75	77	78	67
225	230	66	85	90	78	84	81	86
1302	76	19	18	22	21	22	22	17
1311	80	16	22	23	20	21	24	20

Աղյուսակ 7-ում բերված տվյալները ցուց են տալիս, որ փորձարկված բոլոր կաթնաթթվային բակտերիաները, բացառությամբ № 125 կաթնաթթվային բակտերիայի L-ասպարագին, L-աղաթթվային հիստիդին և DL-մեթիուզինին ամինոթթունների ազդեցության տակ թթու արտադրելու իրենց ունակությունը բարձրացնում էն:

Այսպես՝ № 317/385 կաթնաթթվային բակտերիաներն առանց ամինոթթունների սպիտակուցաղերծ կաթնաշիճուկում զարգանալիս առաջացնում են  $40^{\circ}$  թթվություն, իսկ ամինոթթունների ներդրությամբ առաջացնում են  $69^{\circ}$  թթվություն,

Ն 1311 գնդաձև կաթնաթթվալին բակտերիաների թթու արտադրելու ունակությունը նույն ամիսնոթթուների ազդեցության տակ  $16^{\circ}$ -ից բարձրանում է  $55^{\circ}$ -ի:

Աղյուսակ 7

Սպիտակուցագերծ կաթնաշիճուկում տարրեր ամիսնոթթուների ազդեցությունը կաթնաթթվային բակտերիաների զարգացման վրա

Կաթնաթթվային բակտերիաներ	Սպիտակուցագերծ կաթնաշիճուկին 0,005% ամիսնոթթուներ ավելացնելու դեպքում	
	Առաջնաթթվային բակտերիաներ	Առաջնաթթվային բակտերիաներ
$\frac{1}{L \cdot \text{առաջնաթթվային}} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}}$	$D \cdot \text{առաջնաթթվային} + \frac{1}{L \cdot \text{առաջնաթթվային}} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}}$	$L \cdot \text{առաջնաթթվային} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}}$
$\frac{1}{L \cdot \text{առաջնաթթվային}} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}}$	$L \cdot \text{առաջնաթթվային} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}}$	$L \cdot \text{առաջնաթթվային} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}}$
$\frac{1}{L \cdot \text{առաջնաթթվային}} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}}$	$L \cdot \text{առաջնաթթվային} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}}$	$L \cdot \text{առաջնաթթվային} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}}$
$\frac{1}{L \cdot \text{առաջնաթթվային}} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}}$	$L \cdot \text{առաջնաթթվային} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}}$	$L \cdot \text{առաջնաթթվային} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}}$
$\frac{1}{L \cdot \text{առաջնաթթվային}} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}}$	$L \cdot \text{առաջնաթթվային} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}}$	$L \cdot \text{առաջնաթթվային} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}} + \frac{1}{D \cdot \text{առաջնաթթվային}}$

Թթու թիվ թիվ թիվ թիվ

125	214	59	55	63	82	71	35	65
317/385	212	40	69	42	51	66	31	46
3. Ա	228	61	78	67	76	77	50	72
225	230	66	90	83	70	85	48	82
1302	76	19	24	17	18	24	17	22
1311	80	16	55	22	20	25	10	19

Ինչպես երկում է աղլուսակ 8-ում բերված տվյալներից, փորձարկվող բոլոր կաթնաթթվալին բակտերիաները, L-աղաթթվալին արգինին, DL-բետա-ալանին և L-գլուտամինաթթու ամիսնոթթուների ազդեցության տակ բարձրացնում են իրենց թթու արտադրելու ունակությունը:

Այսպիսի՝ № 3 Ա կաթնաթթվալին բակտերիաները նույն ամիսնոթթուների ազդեցության տակ թթու արտադրելու իրենց ունակությունը  $61^{\circ}$ -ից բարձրացնում են  $124^{\circ}$ -ի:

Նույնամասն արդյունք է ատացվում, երբ № 1302 կաթնաթթվալին գնդաձև բակտերիաները, սննդամիջավայրում նշված ամիսնոթթուներն ավելացնելիս, իրենց թթու առաջացնելու ունակությունը բարձրացնում են  $19^{\circ}$ -ից  $70^{\circ}$ -ի:

Փորձերը ցուց են տվել, որ սննդամիջավայրում որոշ ամիսնոթթուների, ինչպիսի, օրինակ, L-գլուտամինաթթուն և DL-աղա-

թթվալին լիզինը, DL-աղաթթվալին օրնիթինի հետ (աղյուսակ 7), DL-մեթինինը և DL-տրիպտոֆանը նինհիդրինի հետ, DL-սերինը և L-ցիստեինը նինհիդրինի հետ (աղյուսակ 8) համատեղ ներկայալունք կաթնաթթվալին բակտերիաների զարգացմանը չեն նպաստում: DL-մեթինին, DL-տրիպտոֆան և նինհիդրին ամինոթթուներ ավելացնելիս՝ № 225 և № 3 M կաթնաթթվալին բակտերիաների թթու առաջացնելու ունակությունը խիստ թուլանում է: Օրինակ, № 225 կաթնաթթվալին բակտերիաները եթե ստուգիչում առաջացնում են  $66^{\circ}$  թթվություն, ապա հիշյալ ամինոթթուների ներդրուծությամբ առաջացնում են  $26^{\circ}$  թթվություն, իսկ № 3 M կաթնաթթվալին բակտերիաները  $61^{\circ}$  թթվության փոխարեն առաջացնում են  $30^{\circ}$ : Այդպիսի պատճեր են ցուց տալիս նաև № 125 կաթնաթթվալին բակտերիաները:

## Աղյուսակ 8

Սպիտակուցաղերծ կաթնաշիճուկում տարբեր ամինոթթուների աղցացությունը  
կաթնաթթվալին բակտերիաների զարգացման վրա

$\text{L}-\text{աղցացաղերծ կաթնաշիճուկի թթու}$	$\text{DL}-\text{աղցացաղերծ կաթնաշիճուկի թթու}$	$\text{Սպիտակուցաղերծ կաթնաշիճուկին} + 0,005\%$ $\text{թթուներ ավելացնելու դեպքում}$	$\text{DL}-\text{աղցացաղերծ կաթնաշիճուկի թթու}$	$\text{L}-\text{աղցացաղերծ կաթնաշիճուկի թթու}$	$\text{DL}-\text{աղցացաղերծ կաթնաշիճուկի թթու}$
$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$
$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$
$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$
$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$	$\text{U}-\text{աղցալիք}$

## Թթվությունն ըստ թյուների

125	214	59	68	66	32	86	31
371/385	212	40	40	50	62	60	26
3 M	228	61	65	72	76	124	30
225	230	66	45	84	85	110	26
1302	76	19	23	17	34	70	5
1311	80	16	23	20	27	66	8

7 և 8 աղյուսակների տվյալները ցուց են տալիս, որ սպիտակուցաղերծ կաթնաշիճուկին երբ ավելացնում ենք նինհիդրին, կաթնաթթվալին բակտերիաների թթու արտադրելու ունակությունը թուլանում է, չնայած, որ նինհիդրինի հետ կան այնպիսի ամինոթթուներ, որոնք առանձին-առանձին նպաստել են կաթնաթթվալին բակտերիաների թթու արտադրելու ունակությանը:

Աղյուսակ 9-ի տվյալներից երևում է, որ սպիտակուցազերծ կաթնաշիճուկին երբ նշված ամինոթթուները միասին ենք ավելացնում, ( $0,005\%$ ), համարյա բոլոր կաթնաթթվային բակտերիաների թթու արտադրելու ունակությունը բարձրանում է:

№ 317/385 կաթնաթթվային բակտերիաները սպիտակուցազերծ կաթնաշիճուկում վերորդիչյալ ամինոթթուների առկայության դեպքում  $40^{\circ}$  սկզբնական թթվությունը բարձրանում է  $55^{\circ}$ -ի:

Աղյուսակ 9  
Սպիտակուցազերծ կաթնաշիճուկում տարրեր ամինոթթուների միացյալ ազդեցությունը կաթնաթթվային բակտերիաների զարգացման վրա

Կաթիքնաթթվային բակտերիաների սպիտակուցազերծ կաթնաշիճուկում տարրեր	Անուղիւն կաթիքնաթթվային բակտերիաների սպիտակուցազերծ կաթնաշիճուկում տարրեր	Թթվությունն ըստ թյուրների	
		Սպիտակուցազերծ կաթնաշիճուկում տարրեր	Անուղիւն կաթիքնաթթվային բակտերիաների սպիտակուցազերծ կաթնաշիճուկում տարրեր
		0,005%	DL-ալֆա-ալանին, ամինոթթագիտաթթու, L-աղաթթվային արգինին, L-ասուլարագին, DL-ազպագինաթթու, DL-բետա-ալանին, DL-վալին, L-աղաթթվային հիստիդին, L-զլուտամինաթթու, DL-լեյցին, DL-աղաթթվային լիզին, DL-մեթիոնին, DL-աղաթթվային օրնիթին, DL-սերին, DL-տրիպոֆան, L-ցիստեին, սինհիդրին միամին ավելացնելու դեպքում:
125	214	59	70
317/385	212	40	55
3 Մ	228	61	75
225	230	66	79
1302	76	19	24
1311	80	16	25

Բերված աղյուսակների տվյալներից երևում է, որ կաթնաթթվային բակտերիաները տարրեր վիրաբերմունք ունեն տարրեր ամինոթթուների նկատմամբ, հետևազես զարնան կաթի անմահորդելիությունը՝ ամինոթթուների պակասության հետևանք է:

Հետազոտությունների արդյունքները մեզ բերում են հետեւալ նորակացությանը.

1. Կաթնաթթվային տարրեր բակտերիաներ, տարրեր ամինոթթուների նկատմամբ, տարրեր պահանջ ունեն:

2. Կարնան կաթի մեջ՝  $0,005\%$  տարրեր ամինոթթուներ ավելացնելիս ձողաձև, զնդաձև կաթնաթթվային բակտերիաների թթու արտադրելու ունակությունը բարձրանալով բարելավվում է կաթնամակարդի օրգանուլեստիկ հատկությունները:

**Առանց ամինոթթուներ ավելացնելու ացիդոֆիլային կաթնաթթվային բակտերիաները գարնան կաթն ավելի դանդաղ են մակարդում, մակարդը համեմատաբար թուլ է ստացվում, դանդաղում է բակտերիաների կիսվելու պրոցեսը, մեծանում են նրանց շափակերը։ Սակայն գարնան կաթին ամինոթթուներ ավելացնելուց կաթնաթթվային բակտերիաների թթու արտադրելու ունակությունը գգալի բարձրանում է, կաթի մակարդման տևողությունը կրճատվում է, կաթնամակարդը ստացվում է պինդ։ Կաթնաթթվային բակտերիաների կիսվելու ընդունակությունը և բջջի մեծությունը կարգավորվում է։**

**3. Սպիտակուցագերծ կաթնաշիճուկում փորձարկվող կաթնաթթվային բակտերիաների ակտիվ զարգացմանը և թթու արտադրելու ունակությանը նպաստում են՝ L-աղաթթվային արգինինը, DL-բետա-ալանինը և L-գլուտամինաթթուն միասին վերցրած։**

**Սպիտակուցագերծ կաթնաշիճուկում փորձարկված կաթնաթթվային բակտերիաների թթու արտադրելուն չեն նպաստում՝ միասին վերցրած հետևյալ ամինոթթուները DL-մեթիոնին, DL-տրիպոտիման և նինհիդրին խառնուրդը։ DL-սերին, L-ցիստեին և նինհիդրին խառնուրդը։ L-գլուտամինաթթու, DL-աղաթթվալին լիզին և DL-աղաթթվալին օրնիթին խառնուրդը։**

Լ. А. Еրզնկян, М. Ш. Пахлеванян, Л. Г. Акопян

## Влияние различных аминокислот на развитие молочнокислых бактерий

### Р е з ю м е

1. «Весенняя несвашиваемость» молока связана с низким содержанием аминокислот в весеннем молоке. Испытуемые нами молочнокислые бактерии для своего нормального развития в молоке и сыворотке требуют присутствия различных аминокислот.

2. Молочнокислые бактерии плохо развиваются в весеннем молоке, сгусток молока получается вялым, с низкой кислотностью. Интенсивность деления клеток молочнокислых бактерий происходит замедленно, поэтому величина клеток

бактерий превышает величину нормальных клеток в 3—5 раз. Резко снижаются органолептические свойства сгустка молока.

3. При добавлении к весеннему молоку различных аминокислот (каждой по 0,005%) значительно повышаются кислотообразующие свойства молочнокислых бактерий, ускоряется время свертывания молока, сгусток получается плотный. Процесс деления клеток нормализуется и величина клеток не превышает  $10-12 \times 0,8$  микрон.

4. Развитие молочнокислых бактерий в молочной сыворотке, освобожденной от белков, происходит значительно лучше при добавлении к сыворотке по 0,005% L-аргинина солянокислого, DL-бета-аланина и L-глютаминовой кислоты.

L. A. Yerzinkian, M. Sh. Pakhlevanian, L. G. Akopian

**The effect of various amino-acids on the growth  
of lactic acid bacteria**

**Summary**

1. The low contents of amino-acids in spring milk makes it difficult to clot.

2. The lactic acid bacteria grow poorly in spring milk and therefore organo-leptic properties of density of milk strictly decreased.

3. By adding various amino-acids to spring milk (L-Arginine, DL  $\beta$ -Alanine, L-Glutamic acid the acid forming property of lactic acid bacteria increases.

**ЛИТЕРАТУРА**

1. Афанасьева М. В. и Костычев С. П. Получение молочной кислоты из молочной сыворотки. Труды Центрального научно-исследовательского биохимического института пищевой промышленности, 1932, том 2, вып. 3.
2. Войткевич А. Ф. Об отношении молочнокислых бактерий к молоку различной свежести. «Вестник бактериолого-агрономической станции», 1916, № 22.

3. Горбачева А. Биологическая ценность белков кормовых средств. Тезисы доклада на конференции по белку, 1950.
4. Давидов Р. Б., Круглова Л. Содержание витамина В<sub>12</sub> в молоке. «Молочная промышленность», 1958, 7, стр. 42.
5. Ерзинская Л. А. Влияние среды на изменчивость молочнокислых бактерий. «Вопросы сельскохозяйственной и промышленной микробиологии», 1958, вып. 4 (10).
6. Кугенев П. В., Медведева М. Н. Сезонное колебание количества аминокислот в молоке. «Молочная промышленность», 1961, № 1, январь.
7. Медведева М. Н., Кугенев П. В. Количественное определение аминокислот в белках молока. «Биохимия», 1958, т. 23, вып. 5.
8. Новикова С. И. Начальные этапы расщепления лактозы культурами в зависимости от условий среды. Тезисы по докладу на конференции по биохимии и физиологии микроорганизмов, 1957.
9. Скалон И. С. Влияние состава среды на кислотообразование молочнокислых бактерий. «Изв. Института им. П. Ф. Лесгафта», 1940, т. 23.
10. Тихомирова Т. В. К вопросу о биологических свойствах молока в разные сезоны года, 1958. Рукопись.
11. Barghag et Cordet C. R. Soc. biol. 86; p. 582. (Цитировано по Савину „Об активаторе молочнокислого брожения. „Микробиология“, 1933, т. 2, вып. 3.
12. Davis and Mattik 1933, Nitrogen metabolismus. Biol. Abstr., vol. 7; № 8. Цитировано по Скалону, Влияние состава среды на кислотообразование молочнокислых бактерий, „Изв. Института им. П. Ф. Лесгафта“, 1940, т. 23.
13. Knudsen und Soerensen, 1927. Ueber die Milch als Nahrboeden für gewisse Milchsäurebakterien. Zbl. F. Bact. 11. Abt., Bd. 71. Цитировано по Скалону, Влияние состава среды на кислотообразование молочнокислых бактерий „Изв. Института им. П. Ф. Лесгафта“, 1940, т. 23.
14. Sagastume C. and Cascon, 1931. Chem. Zbl, VII. Цитировано по Скалону, Влияние состава среды на кислотообразование молочнокислых бактерий „Изв. Института им. П. Ф. Лесгафта“, 1940, т. 23.
15. Weigmann, 1889, Milchzeitung, № 50. Цитировано по Скалону, Влияние состава среды на кислотообразование молочнокислых бактерий „Изв. Института им. П. Ф. Лесгафта“, 1940, том 23.
16. Duncan S. M., Watson G. L., Dunn K. T. Ely K. S. 1952, YOURN Dairy sei, 35, 2.